

ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲԻ ՀԱՄՈՉՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Փաստարկման ուսմունքի կարևորագույն հասկացություններից են կարծիքի և համոզականության ըմբռնումները: «Փաստարկումը,— գրում է Գ. Բրուտյանը,— այնպիսի կշռադատություն է, որի ընթացքում առաջադրվում է որևէ դրույթ՝ որպես ապացուցման թեզիս: քննարկվում են այդ դրույթի ճշմարտության օգտին բերված փաստարկները, ինչպես նաև՝ դրույթի դեմ հակափաստարկները: արժեքավորում են թեզիսը և ապացուցման հիմքերը: հերքվում է թեզիսի դեմ ներկայացված կամ հնարավոր ներկայացվող դրույթը՝ հակաթեզիսը, ապացուցվում թեզիսի ճշմարտությունը: ինչպես ապացուցողի, այնպես էլ ընդդիմախոսի (կամ ընդդիմախոսների) մոտ համոզմունք է ստեղծվում թեզիսի ճշմարիտ և հակաթեզիսի սխալ լինելու վերաբերյալ: հիմնավորվում է թեզիսին հավանությունն տալու ինդիքը»¹:

Դժվար չէ նկատել, որ բերված սահմանման երակետը ապացուցման համար նախատեսված թեզիսի՝ կարծիքի առաջադրումն է, իսկ ավարտը՝ ինչպես ապացուցողի, այդպես էլ ընդդիմախոսի մոտ համոզմունքի ստեղծումը: Որոշ մտածողներ, օրինակ Պերելմանը, փաստարկման ուսմունքում մտցրել են «լսարանի»² գաղափարը: Ըստ այդ մտածողների՝ փաստարկման նպատակը «լսարանում» հասարակական որոշակի խմբի համար թեզիսի, կարծիքի համոզիչ դարձնելն է: Փոխտփայության մեջ այդօրինակ գաղափարների առաջադրումը եզակի չէ: Մասնապես, կարելի է հիշատակել Պուանկարեի կոնվենցիոնալիստական ուսմունքը և գիտության մեթոդաբան Թ. Կունի առաջադրած «գիտնականների միաբանություն»³ «գիտնականների լսարան» ըմբռնումը: Մեր կարծիքով, այդ գաղափարները կազմելով ճանաչողության պրոցեսի բաղկացուցիչ մասը, շեշտում են ճշմարտության ըմբռնման մարդկային, հասարակական կողմը՝ ճշմարտության ընդունումը, ճանաչումը կապում են «ընդդիմախոսների», «լսարանի», «գիտնականների միաբանության» գոյության հետ: Դժվար չէ նկատել, որ խոսքը ոչ թե ճշմարտությունը բացահայտելու, հայտնաբերելու, այլ դրա ընդունման, ճանաչման մասին է:

Դեռևս Արիստոտելն է ասել, որ ճշմարտությունը դա գիտելիքի համապատասխանությունն է իրականությանն: Ենթադրվում էր, որ գոյություն ունի իրական, օբյեկտիվ աշխարհ և մարդու կողմից ստեղծված այդ աշխարհի պատկերը: Դրանք միմյանց համապատասխանում են այնպես, ինչպես լուսանկարը բնօրինակի հետ: Այդ ավանդույթը փոխտփայական որոշ դպրոցներում շարունակվում է մինչև այսօր: Դրանցում հիմնականում շեշտվում է օբյեկտիվ ռեալության հետ աշխարհի պատկերի ճիշտ, աղեկվատ արտացոլում ելնելը՝ ենթադրելով, որ այն անկախ է մարդկայինից, նրա հասարակական, հոգեբանական, մշակութային արժեքների համակարգից: Ստվերում է թողնվում այն, որ ճշմարտության՝ որպես այդպիսին ճանաչողը, ընդունողը կոնկրետ մարդն է, մարդկային որոշակի հասարակությունը, մարդկային քանականությունը:

Այդ իրողությունը նկատել է դեռևս Ի. Կանտը⁴, և դա հաստատվում է նաև գիտության ռեալ պրակտիկայով: Այժմ ակնհայտ է, որ հիպոթեզների առաջադրումը, դրանց տեսությունների վերաճվելը անմիջականորեն կապված է ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի հասարակական, հոգեբանական, մշակութային համատեքստից, այլև գիտական տվյալ դրա-

¹ Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանության դասընթաց, Եր., 1987, էջ 407, տե՛ս նաև Գ. Ա. Брутян. Аргументация. Ереван, 1984.

² Ch. Perelman, J. Brechts-Tyteca L. The New Rhetoric. A Treatise on Argumentation, Not re Dame - London, 1969.

³ Т. Кун. Структура научных революций. М., 1977.

⁴ И. Кант. Трактаты и письма. М., 1980, с. 372.

րոցի, նույնիսկ գիտնականի անհատականությունից: Այսինքն, մենք գործ ունենք ոչ թե մերկ, մարդկային բանականությունից անկախ ճշմարտության հետ, այլ որոշակի արժեքների համակարգի տեսանկյունից ընդունելի, ճանաչելի դարձող գիտելիքների ձևի հետ: Հենց այդ գաղափարը՝ ճշմարտության հարաբերական բնույթն է շեշտվում այն փիլիսոփայական ուղղությունների կողմից, որոնք գիտելիքի ընդունումը, ճանաչումը կապում են տվյալ «լսարանի», «գիտնականների միաբանության» համոզականության հետ: Այդ մտտեցումների համաձայն՝ փաստարկը, դրույթը, գիտական գիտելիքը ճշմարիտ է ճանաչվում այն դեպքում, երբ դրանում համոզվում են տվյալ «լսարանի», «գիտնականների միաբանության», հասարակական խմբի անդամները: Ասենք, որ այդօրինակ մտտեցումը թերում է ոչ թե ճշմարտության սուբյեկտիվ⁵ ըմբռնմանը, այլ արձանագրում է դրա մարդկային քրոնոլոգի: Ընդ որում, դա ոչ թե անհատ մարդու համոզմունք է, այլ հասարակական որոշակի խմբի, կամ, ընդհանրապես, հասարակության համոզմունք:

Մեր կարծիքով, գիտելիքների ընդունման, ճանաչման նմանօրինակ մտտեցումը կարելի է դիտել որպես տվյալ «լսարանի» համընդհանրականությունը և անհրաժեշտությունը ապահովող պահանջ: Կարելի է ասել, որևէ փաստարկ, դրույթ, գիտելիքի ձև համոզիչ է, ընդունվում, ճանաչվում է տվյալ «լսարանի», «գիտական միաբանության» և, ընդհանրապես, հասարակության կողմից, եթե այն համընդհանրական է և անհրաժեշտ: Այսինքն, հասարակական տվյալ խմբի բոլոր անդամներն անհրաժեշտորեն ընդունում, ճանաչում են այդ կարծիքը, տեսակետը: Փաստարկման սկզբում առաջադրված փաստարկը, դրույթը, գիտելիքը, կարծիքը փաստարկման վերջում, երբ այն ազատ, առանց շահի ու ստիպողականության ընդունվում, ճանաչվում է հասարակական տվյալ խմբի՝ «լսարանի» կողմից, վերածվում է համոզմունքի, այսինքն դառնում է համընդհանրական և անհրաժեշտ, հավաստի: Այդ դեպքում փաստարկման գործընթացն իրենից կներկայացնի կարծիքից համոզմունքին, հավանական գիտելիքից հավաստի գիտելիքին, այսինքն համընդհանրական և անհրաժեշտ գիտելիքին անցնելու գործընթաց:

Կարծիքի, համոզմունքի և հարակից ըմբռնումները Ի. Կանտի ուսմունքում

Համոզմունքի ըմբռնումը Ի. Կանտը քննարկում է կարծիքի և վստահության ըմբռնումների հետ միասին: Հարցն այն է, թե մենք ինչ հիմքերով ենք ճանաչում, ընդունում դատողության կամ գիտելիքի ճշմարտությունը: Նրա կարծիքով դրանք երկուսն են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերը:

Կարծիքը, ըստ Կանտի, գիտակցաբար որևէ բանի ճշմարիտ ճանաչումն է. այն անբավարար է ինչպես սուբյեկտիվ, այդպես էլ օբյեկտիվ հիմքերով: Դա ելակետային դատողություն է. նախքան որևէ բանի ընդունելն ու պնդելը, մենք ունենում ենք կարծիք. դրանից է սկսվում մեր ճանաչողությունը: «Երբեմն,— գրում է նա,— մենք ունենում ենք միայն ճշմարտության աղոտ կանխազգացում՝ մեզ թվում է, թե իրն ունի ճշմարտության հատկանիշներ: Մենք դրա ճշմարտության մասին կանխազգում ենք ավելի շուտ, քան այն ճանաչում ենք որոշակի հավաստիությամբ»⁶: Դա հնարավորություն է, որն անբավարար է ինչպես օբյեկտիվորեն, այդպես էլ սուբյեկտիվորեն: Վստահությունը, Կանտի կարծիքով, ճշմարտության ընդունումը, ճանաչումն է անբավարար հիմքերով. անհայտ է, այդ հիմքերը միայն սուբյեկտիվ են, թե՛՝ նաև օբյեկտիվ: Հաճախ վստահությունը նախորդում է համոզմունքին: Որպեսզի անցում կատարենք պարզ վստահությունից համոզմունքին, մենք պետք է հետազոտենք, ստուգենք՝ օբյեկտի մասին մեր ունեցած հիմքերը բավարար են, թե՛՝ անբավարար⁷: «Ո՛վ գիտե,— գրում է Կանտը,— թե ինչ է հավաստիությունը, նա իրեն թույլ չի տա հեշտորեն շփոթելու վստահությունը համոզմունքի հետ և, հետևաբար, թույլ չի տա իրեն համոզելու»⁸: Թեև ցանկացած վստահություն իր ձևով կեղծ է, որովհետև ոչ հավաստի ճանաչողությունը թվում է հավաստի, սակայն այն իր բնույթով կարող է լինել ճշմարիտ: Դրանով վստահությունը տարբերվում է կարծիքից, որը ոչ հավաստի գիտելիք է: «Վստահությունը,— նկատում է նա,— ես կարող եմ պահպանել ինձ համար, եթե այն բավարարում է ինձ, սակայն ես չեմ կարող և չպետք է փորձեմ այն դիտարկել որպես այլ մարդկանց համար նշանակություն ունեցող»⁹: Վստահության դեպքում դատողության հիմքերը թեև գտնվում են միայն սուբյեկտում, սակայն այն ընդունվում է օբյեկտիվ հիմքերի փոխարեն: Այդ պատճառով, այդպիսի դատողությունն ունի միայն անհատական

⁵ II. Агаян. Критический анализ современных буржуазных концепций философской аргументации. Ереван, 1987, с. 54.

⁶ И. Кант. Соч. в шести томах. Т. 3, М., 1964, с. 673.

⁷ И. Кант. Трактаты и письма, с. 374.

⁸ Նույն տեղում, էջ 880:

⁹ И. Кант. Соч. в шести томах. Т. 3, с. 673.

Անհատություն, և դրա կողմից ճշմարտությամբ ճանաչումը չի կարող հաղորդակցման առարկա լինել: Այսպիսով, Կանտի կարծիքով, սուբյեկտիվ տեսակետից վստահությունը և համոզմունքը միմյանցից չեն տարբերվում: Դրանք տարբերվում են միայն օբյեկտիվության տեսակետից: «Եթե դատողությունը,— գրում է նա,— նշանակություն ունի բանականությամբ օժտված յուրաքանչյուրի համար, ապա այն ունի օբյեկտիվ բավարար հիմքեր: Դրա օբյեկտիվության ճանաչումը անվանվում է համոզմունք»¹⁰: Նշված ըմբռումների հետ սերտորեն կապված են հավանականի, հավաստիության, երևութականության և հիպոթեզի գաղափարները: Կանտը դրանք միմյանցից տարբերում է ճշմարտության ընդունման, ճանաչման հիմքերի տարբերակման միջոցով:

Հավանականը նա դիտարկում է ոչ թե ինքնին, այլ որպես գործընթաց՝ ձգտում դեպի հավաստիությունը: Վերջինս ճշմարտության այնպիսի ճանաչում է, որը բավարար է ինչպես օբյեկտիվ, այդպես էլ սուբյեկտիվ հիմքերով: «Հավանականություն ասելով,— գրում է Կանտը,— անհրաժեշտ է հասկանալ ճշմարտության ճանաչում անբավարար հիմքերով, տակայն դրանք ավելի մեծ չափով կապված են բավարար հիմքերի հետ, քան՝ հակառակը»¹¹: Դրանով նա հավանականությունը տարբերում է պարզ երևութականությունից, որը ճշմարտության ճանաչում է անբավարար հիմքերով, երբ դրանք ավելի մեծ են, քան հակառակի հիմքերը: Հավանականության դեպքում ճշմարտության ճանաչումն ունի օբյեկտիվ նշանակություն, երևութականության դեպքում՝ սուբյեկտիվ: Երևութականությունը վստահության մեծությունն է, իսկ հավանականությունը՝ դեպի հավաստիությունն ունեցած ձրգտումը: Վերջինս, Կանտի կարծիքով, առանձնապես բնորոշ է հիպոթեզներին: Հիպոթեզը, նրա բնութագրմամբ, դա հետևանքներին հասնելու համար հիմքերի ճշմարտության մասին դատողության ճանաչումն է, կամ, ավելի հակիրճ, որպես հիմք ենթադրության ճշմարտության ճանաչումը¹²: Այսպիսով, հիպոթեզներում ճշմարտության ցանկացած ճանաչում հիմնվում է այն բանի վրա, որ ենթադրությունը որպես հիմք բավարար է, որպեսզի դրանից էլնելով բացատրենք հետևանքները: Այստեղ հետևանքի ճշմարտությունից եզրակացություն է կատարվում հիմքի ճշմարտության մասին: Եվ բանի որ, ըստ Կանտի, մենք երբեք չենք կարող որոշարկել, բնութագրել բոլոր հիմքերը, ապա հիպոթեզները միշտ կընճան հիպոթեզներ, այսինքն ենթադրություններ, որոնց հավաստիությանը երբեք չի կարելի հասնել: Դա նշանակում է, որ մենք, ըստ Կանտի, երբեք չենք կարող տեսություն ունենալ, այսինքն բավարար հիմքեր ունենալ գիտական գիտելիքի այդ ձևը հավաստի, համոզիչ ճանաչելու համար: Սակայն, ինչպես հայտնի է, գիտության զարգացումը բերեց ոչ միայն գիտության առավել հասուն, կատարյալ ձևի՝ տեսության ձևավորմանը, այլև որոշ բնագավառներում նաև տեսությունների համակարգի առաջացմանը: Բնականորեն հարց է առաջանում, թե որոնք են այն հիմքերը, չափանիշները, որոնց ամբողջությունը թույլ է տալիս գիտական գիտելիքի այդ ձևը համարել, գնահատել համընդհանրական և անհրաժեշտ, հավաստի, կատարյալ, համոզիչ:

Փիլիսոփայության պատմության մեջ տարբեր ժամանակներում և ուսմունքներում գիտելիքի ճշմարտության չափանիշները, ընդունման, ճանաչման պահանջները ըմբռնվել են տարբեր կերպ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Կանտի մտտեցումը: Նա գտնում է, որ ճշմարտության այն ըմբռումը, որի համաձայն դա գիտելիքի համապատասխանությունն է օբյեկտի հետ՝ անիրականացի է: Մեր գիտելիքը, գտնում է Կանտը, կարող ենք համեմատել օբյեկտի հետ այն բանի շնորհիվ, որ մենք այդ օբյեկտը ճանաչում ենք: Դա նշանակում է, որ մեր գիտելիքը հաստատում է ինքն իրեն, որն անբավարար է ճշմարտության համար: Այդ կապակցությամբ նա գրում է. «Քանի որ օբյեկտը գտնվում է ինձանից դուրս, իսկ գիտելիքը իմ մեջ, ապա ես կարող եմ դատել միայն այն բանի մասին, թե համաձայնվո՞ւմ է արդյոք օբյեկտի մասին իմ գիտելիքն օբյեկտի մասին իմ գիտելիքի հետ»¹³: Նրա կարծիքով անհրաժեշտ է տարբերել այն, ինչը պատկանում է մեր գիտելիքի մատերիային՝ օբյեկտին, նրանից, ինչը վերաբերվում է միայն ձևին՝ առանց որի այդ գիտելիքը չի կարող գիտելիք լինել: Այդ իմաստով, գտնում է նա, եթե օբյեկտների տարբերությունից վերացարկվող ճշմարտության համընդհանուր չափանիշ առաջադրելն անհնարին է, նույնիսկ անիմաստ, ապա ճշմարտության ձևական չափանիշների առաջադրելը հնարավոր է: «Որքանով ձևական ճշմարտությունը գիտելիքի համապատասխանությունն է միայն ինքն իր հետ՝ ընդհանրապես վերացարկվելով բոլոր օբյեկտներից

¹⁰ Նույն տեղում, էջ 672:

¹¹ И. Кант. Трактаты и письма, с. 389.

¹² Նույն տեղում, էջ 802:

¹³ Նույն տեղում, էջ 857:

և դրանց բոլոր տարբերություններից»¹⁴: Կանտի կարծիքով ճշմարտության համընդհանուր ձևական չափանիշները ոչ այլ բան են, քան ինքն իր հետ կամ, որ նույնն է, բանախոսության ու բանականության համընդհանուր օրենքների հետ գիտելիքների համապատասխանության ընդհանուր տրամաբանական հատկանիշները: Նա առաջադրել է հետևյալ ճշմարտության ձևական կամ տրամաբանական չափանիշները՝ հակասության օրենքը, բավարար հիմունքի օրենքը և երրորդի բացառման օրենքը: Ինչպես նկատելի է, Կանտը գիտելիքի ճշմարտության չափանիշների հարցը հանգեցնում է տրամաբանորեն գիտելիքի ճիշտ կառուցման հարցին:

Հայտնի փիլիսոփա Ֆ. Ֆրանկը գիտելիքի ճշմարտության չափանիշների փոխարեն առաջադրում է տեսությունների ընդունման գիտական չափանիշների գաղափարը¹⁵: Նրան հիմնականում հետաքրքրում է այն չափանիշները, որոնցով ղեկավարվում են գիտնականները, երբ որոշակի բնագավառի դիտարկելի փաստերի բացատրման համար առաջադրված մի քանի տեսություններից մեկը նրանց կողմից գնահատվում, ճանաչվում է լավագույնը: Ֆ. Ֆրանկն առաջադրում է տեսության ընդունման երեք չափանիշներ՝ համաձայնություն դիտարկման ու առողջ բանականության փորձի հետ և պարզությունը: Ընդ որում, վերջին երկուսը նա համարում է սցիտոլոգիական գործոններ: Ֆ. Ֆրանկի տեսակետը հետաքրքիր է այն առումով, որ ճշմարտության չափանիշների փոխարեն առաջին պլան է մղում ընդունման, ճանաչման չափանիշների գաղափարը՝ գիտելիք մարդկային բանականություն հարաբերությունը: Այսպես, պետք է նկատի ունենալ, որ նրա առաջադրած գիտելիքի գնահատման չափանիշները բավականին թերի ու անորոշ են:

Հայրենական գրականության մեջ գիտական պնդումների և տեսությունների ընդունման, ճանաչման հարցերով զբաղվել է պրոֆեսոր Հ. Գևորգյանը: Նա հակադրվելով փիլիսոփայական գրականության մեջ տեղ գտած օբյեկտիվացված՝ տրամաբանականացված գիտության պատկերացումներին (Բոլցանո, Հուսերլ, Ֆրեգե, Պոպեր), գտնում է, որ գիտական գիտելիքի ընդունման, գնահատման չափանիշներն ունենալով օբյեկտիվացված բնույթ՝ անբաժան են գիտական գիտելիքներից: Այդ չափանիշները Հ. Գևորգյանը բաժանում է երկու խմբի.

1. Տեսության ճշմարտային նշանակությունը և ընդունելի լինելը բնութագրող փորձարկման և արդարացման տարբեր եղանակները:

2. «Ներքին» կարգի պահանջը. «տրամաբանական համաձայնությունը», «հասկացական սպարատի տրամաբանական կատարելիությունը», «պարզությունը և նրբագեղությունը»¹⁶: Միաժամանակ, նա գտնում է, որ որպես ընտրության, ճանաչման չափանիշներ կարող են ծառայել նաև տեսության նպատակները և ֆունկցիաները¹⁷: Տեսության նպատակներ ասելով Հ. Գևորգյանը նկատի ունի երևույթների և դրանց փոխազդեցության ընդգրկման լրիվությունը, որպես հիմք հնարավորին չափ քիչ և տրամաբանորեն անկախ հիմնական օրենքների, աքսիոմների ընտրությունը: Տեսության ֆունկցիաների մեջ նա թվարկում է գումարման, բացատրման, կանխատեսման, ինֆորմատիվության, վերահսկողության, նկարագրման էվրիստիկական ֆունկցիաները: Բացի այդ, Հ. Գևորգյանը գիտական արդյունքի հաստատման, հիմնավորվածության, այսինքն գիտելիքի ճշմարտության նկատմամբ ունեցած մեր վստահության հիմքը պայմանավորում է սպացոցողականությունը, անճանաչողության «ֆոնով», և դարաշրջանի «ֆոնով»: Այդ երեք ֆակտորները, նրա կարծիքով, համոզականություն են ստեղծում ինչպես առանձին վերցված ճանաչող անհատի, այդպես էլ «ճանաչողության հասարակության սուբյեկտի» համար: Հիմնականում համաձայն լինելով Հ. Գևորգյանի դատողությունների հետ, այդուամենայնիվ նկատենք, որ նրա՝ գիտելիքի ճանաչման, ընդունման, ընտրության չափանիշների բնութագրությունը բավականին ընդհանրական է և որոշարկման կարիք ունի: Անորոշ է մնում նաև գիտելիքի ընդունման, ճանաչման չափանիշների և վստահություն, համոզականություն ստեղծող գործոնների փոխկապակցվածությունը: Մեր կարծիքով, գիտական գիտելիքի ճանաչման, ընդունման չափանիշները և «գիտնականների միաբանությունում» համոզականություն ստեղծող գործոնները նույնն են: Ասվածը հիմնավորելու համար որպես ելակետ կարելի է վերցնել արդեն ձևավորված, համակարգված, ընդունված, համընդհանրական և անհրաժեշտ, կատարյալ, համոզիչ ճանաչված գիտելիքի ձևը՝ տիպական տեսությունը, և փնտրել այն հիմքերը, չափա-

¹⁴ Նույն տեղում, էջ 858:

¹⁵ Փ. Ֆրանկ. Философия науки. М., 1960, с. 509—523.

¹⁶ Г. Геворкян. К вопросу о признании в науке утверждений в теории.— В сб.: «Философские вопросы логического анализа научного знания». Вып. 2. Ереван, 1971, с. 22.

¹⁷ Նույն տեղում, էջ 23:

նիշները, որոնք թույլ են տալիս դա գնահատել այդպիսին: Այսինքն, ելնելով արդյունքից, մենք կարող ենք բացահայտել գիտելիքը՝ նրա կատարյալ ձևը ձևավորող հիմքերը: Միա-
ժամանակ, տեսության ընդունման, համոզիչ ճանաչման չափանիշների բացահայտումը թույլ
կտա այդ տեսակետից գնահատել նաև գիտելիքի այլ ձևերը: Որպես մասնավոր դեպք
կարելի է դիտարկել հիպոթեզի և տեսության համեմատական վերլուծությունը: Նկատենք,
որ հիպոթեզը ընդգրկում է կարծիքի ոլորտը, իսկ տեսությունը՝ համոզմունքի: Համադրելով
հիպոթեզի և տեսության գնահատման չափանիշները, մենք հնարավորություն կունենանք
միմյանց համադրելու կարծիքը՝ համոզականության, փաստարկման ելակետը՝ նրա ավարտի
հետ: Միշտ է, մեր առաջարկած ուսումնասիրությունն ընդգրկում է միայն գիտական գի-
տելիքի ոլորտը, սակայն չպետք է մոռանալ Հեգելի այն ասույթը, որ «... միայն ճիշտ
մտածողությունն է առարկայի ճանաչողություն՝ գիտելիք և այդ պատճառով մեր ճանա-
չողությունը պետք է լինի գիտական»¹⁸: Այդ առումով, ուսումնասիրելով տվյալ ժամանակի
«գիտնականների լսարանի» համոզականության չափանիշները, մենք գործ կունենանք իդեա-
լական «համապարփակ լսարանի»¹⁹, զուտ իմացաբանական սուբյեկտի հետ, որն ազատ է
սուբյեկտիվ ցանկություններից, հակումներից և այլ որակներից: Դա այն շերտն է, որի վրա
բարձրանում են հարաբերական ինքնուրույնություն ունեցող մասնավոր «լսարանների» թո-
լոր շերտերը:

Գիտական գիտելիքի կառուցման տրամաբանական ճշգրտությունը և պարզությունը որպես համոզականության չափանիշ

Հիպոթեզի և տեսության համեմատության ակնհայտ առանձնահատկություններից մեկը
դրանց կառուցվածքային տարբերությունն է: Այն, որ դա իր ազդեցությունն ունի գիտական
գիտելիքի հավաստիության, համոզականության աստիճանի վրա, դրա նկատմամբ չպետք
է կասկածել:

Հիպոթեզը գիտական գիտելիքի բնագավառում հանդես է գալիս ամենաթափափակ
կառուցվածքային տեսքերով: Դրա ամենաընդհանրական բնութագիրը տրված է Պուանկարեի
կոլմից: Ըստ նրա՝ «ցանկացած ընդհանրացում հիպոթեզ է»²⁰: Սակայն, այդ տիպի հիպո-
թեզները չի կարելի համեմատել անզամ ամենապարզունակ տեսության կառուցվածքի հետ:
Համեմատությունը պետք է լինի նույնական՝ հավասարաբաժնի: Սովորաբար, մեթոդաբա-
նական ուսումնասիրություններում որպես գիտական գիտելիքի հետազոտության օրինակ
վերցվում է բնագիտական, առավելապես ֆիզիկական հիպոթեզները և տեսությունները:
Դա պայմանավորված է նրանով, որ այդ բնույթի հիպոթեզների, տեսությունների կառուց-
վածքներն ավելի կայուն ու որոշակի են:

Ավելի հասուն ձևերում հիպոթեզները կարող են ներկայանալ մի շարք ավելի պակաս
հզորություն ունեցող հիպոթեզների համակարգի տեսքով: Այդ կարգի հիպոթեզները հիմ-
նականում շարադրվում են բովանդակային լեզվով: Դրանց ելակետային պնդումներն ու
հասկացողությունները թեև ենթադրվում են, սակայն ակնհայտ տեսքով ձևակերպված չեն:
Ահորոշ և անհամակարգված՝ վերակառուցված հիպոթեզները անվանում են հիպոթետիկ դեդուկ-
տիվ համակարգեր: Դրանցում հասկացողությունները, պնդումները, հիպոթեզները դասակարգ-
ված են հիերարխիկ համակարգի ձևով: Գազաբում գտնվում են տրամաբանորեն առավել
ուժեղ պնդումները, հիպոթեզները, որոնցից աստիճանաբար հետանալով՝ տեղավորված
են ավելի պակաս ընդհանրություն ունեցող վերացական օրյեկտները:

Էմպիրիկ բնագիտության հիպոթեզների կառուցվածքների ներքևի շերտերում տեղա-
վորված են այն հասկացողություններն ու պնդումներն, որոնց կարելի է էմպիրիկ մեկնա-
բանություն տալ: Այդ համակարգերը բաց են: Դրանք կարող են հետագա փաստարկման,
էմպիրիկ ստուգելիության, կատարելագործման ենթարկվել՝ մտցվել լրացուցիչ հիպոթեզ-
ներ, հենքը ստուգել, ձևափոխել: Այսինքն, հնարավոր է քիչեցված հետևությունների ստու-
գելիությունից անցում կատարել, ինչպես ելակետային դրույթների, այդպես էլ ավելի պա-
կաս հզորություն ունեցող հիպոթեզների ճշգրտմանը, դրանց, ինչպես նաև ամբողջ հա-
մակարգի, հավանականության աստիճանի որոշմանը: Մեր կարծիքով, հենց այդ կարգի
հիպոթեզների կառուցվածքները կարելի է համեմատել տեսությունների կառուցվածքների
հետ²¹:

¹⁸ Г. Гегель. Философия права. М., 1990, с. 58.

¹⁹ Ch. Perelman, L. Olbrechts-Tyteca. The New Rhetoric. A Treatise on Argumen-
tation, p. 30.

²⁰ А. Пуанкаре. О науке. М., 1983, с. 97.

²¹ S.S. Г. Рузавин. Научная теория. М., 1978; Л. Баженов. Стрoение и функция

Տեսություն կառուցելիս որևէ հետազոտական բնագավառում կուտակված գիտելիքները մտցվում են մի միասնական համակարգի մեջ՝ տրամաբանական կապ է հաստատվում մինչև այդ անկախ թվացող հիպոթեզների և էմպիրիկ օրենքների միջև, որոշվում են դրանց կիրառման սահմանները: Առաջին պլան մղվում են տրամաբանորեն ուժեղ այն հիպոթեզները, օրենքները, սկզբունքները, որոնցից կարելի է բխեցնել ավելի պակաս ընդհանրություն ունեցող պնդումները: Զնավորվում է տեսության կոնցեպտուալ միջուկը, բազիսը կամ ֆունդամենտալ տեսական սխեման: Տեսության կառուցվածքներում ընդգծված ձևով առանձնացվում են. 1) ելակետային տեսական բազիսը՝ հիմնական ենթադրությունները, նախադրյալները, ֆունդամենտալ օրենքները, արսիումները կամ սկզբունքները, 2) տեսության տրամաբանական ապարատը՝ բխեցման կամ ապացուցման հիմնական տրամաբանական կանոնները, 3) տեսության պոստեմպիրորեն հնարավոր բոլոր եզրակացությունները, 4) տեսության էմպիրիկ նախադրյալները, դրանց հիմնական փաստերը, տվյալները և տրամաբանական-մաթեմատիկական արդյունքները:

Դժվար չէ նկատել, որ նույնիսկ առավել հասուն հիպոթեզների համեմատությամբ տեսությունների կառուցվածքները ունեն առավել որոշարկված, կանոնարկված, կայուն տեսք, բավարարում են նույնության, հակասության, երրորդի բացառման, բավարար հիմունքի տրամաբանական օրենքներին: Եթե հիպոթեզները կարող են ինչ-որ չափով չբավարարել նշված օրենքներին (օրինակ՝ դրանցում կարելի է դեռևս հանդիպել հակասական դրույթների), ապա տեսություններում դրանք բացառվում են:

Ինչպես նկատեցինք վերևում, այդ օրենքների պահանջները բավարարելը Կանտը համարում էր գիտելիքի ճշմարտության ամենահիմնական պայմանը, առաջնային չափանիշը: Ասվածից հետևում է՝ ցանկացած փաստարկ, պնդում, դատողություն, գիտելիքի ձև նախ և առաջ պետք է կառուցված լինի որոշակի, ճշգրիտ՝ տրամաբանական օրենքների համաձայն: Հաշորդ կարևոր պահանջը, որին անհրաժեշտորեն բավարարում է տեսությունը, դա նրա ելակետային նախադրյալների անկախությունն է: Անհրաժեշտ է, որ գիտական գիտելիքի կառուցվածքային նախադրյալները լինեն հնարավորին չափ քիչ: Եթե նկատվի, որ մի նախադրյալը բխում է մյուսից (մյուսներից), ապա դա պետք է դուրս մղվի ելակետային նախադրյալների շարքից: Բացի այդ, տեսության ելակետային նախադրյալները պետք է օժտված լինեն տրամաբանական այնպիսի ուժով, որ դրանցից հնարավորին չափով քիչ ad hoc հիպոթեզներ ընդունելով՝ բխեցնել տեսության բոլոր հետևությունները: Այդ պահանջները, որոնք հայտնի են պարզության սկզբունք՝ «Օկկամի ածելի» անվանումով, պատմության տարբեր ժամանակներում ըմբռնվել են տարբեր կերպ: Առաջին անգամ այդ սկզբունքը ձևակերպել է Օկկամը: Այն հնչում է այսպես. «Առանց անհրաժեշտության չպետք է բազմացվեն էությունները»: Նյուտոնը նշված սկզբունքին տվել է օմթոլոգիական տեսք. պարզությունը վերագրվում է ոչ թե գիտելիքին, այլ՝ բնությանը: Կանտը գիտելիքի ակնհայտությունը դիտել է որպես նրա կատարելության, հուսալիության և արդյունավետության արտահայտություն:

Է. Մախի ուսմունքում պարզության սկզբունքին տրվել է հոգեբանական երանգավորում. պարզությունը հոգեկան գործունեության հատկանիշ է՝ մտածողության տնտեսում:

Գիտելիքի կառուցվածքին վերագրվող պարզության պահանջն առանձնապես ակտիվորեն քննարկվել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի բնագետների փիլիսոփայական աշխատություններում²²: Նրանք պարզությունը հիմնականում դիտարկել և դիտարկում են որպես գիտական գիտելիքի կառուցվածքի տրամաբանական ակնհայտություն, պարզություն և դրանցում մաթեմատիկական պարզ ձևակերպությունների կիրառում: Որոշ բնագետներ տեսական կառուցվածքները, նրանցում կիրառվող մաթեմատիկական ձևակերպումները գնահատում են նույնիսկ նրբագեղության, բարեկազմության, ներդաշնակության, այսինքն՝ գեղեցիկի դիրքերից: Իհարկե, գիտելիքի գեղագիտական գնահատականը չպետք է նախընտրվի նրա տրամաբանական կառուցվածքից, սակայն այն պարագայում, երբ անալիտիկ, դեդուկտիվ եղանակներով հնարավոր չէ ստանալ ինչ-որ արդյունք, այդ դեպքում իր դերն է խաղում գեղագիտական զգացողությունը, որն ուղեցույց է ծառայում, երբեմն «տեսանելի» է

естественнонаучной теории. М., 1978; В. Швырев. Теоретическое и эмпирическое в научном познании. М., 1978; Г. Геворкян. Замечания о логико-гносеологическом анализе научного знания.—В сб.: «Философские вопросы логического анализа научного знания». Выпуск I, Ереван, 1969; Л. Абрамян. Анализ научной теории в свете идей семиотики. В сб.: «Философские вопросы логического анализа научного знания». Выпуск I.

²² Г. Оганесян. О критерия простоты. В сб.: «Философские вопросы логического анализа научного знания». Выпуск 3, Ереван, 1974, с. 161—171.

դարձնում այդօրինակ խնդիրների լուծումները: Պատահական չէ, որ բնագիտության մեջ առավել բարձր են գնահատվում այն խնդիրների լուծումները, որոնք հնարավոր չէ ստանալ տիպական եղանակներով՝ դեդուկտիվ բխեցումների միջոցով:

Ահա, այդ դեպքում իր դերն է խաղում գեղագիտական զգացողությունը. մենք գործ ենք ունենում մտածողության տրամաբանական ձևերի և գեղագիտական զգացողության համապատասխանության հետ:

Այսպիսով, գիտական գիտելիքի կառուցվածքային որոշակիությունը, ակնհայտությունը, ճշգրտությունը, պարզությունը, հիմնավորվածության հուսալիությունը, նրա կատարելության, համոզչության դրսևորումներից մեկն է:

Գիտական գիտելիքի էմպիրիկ հիմնավորվածությունը որպես համոզչականության չափանիշ

Ինչպես տեսանք էմպիրիկ բնագիտության հիպոթեզների և տեսությունների ընդհանուր կառուցվածքային վերլուծությունից, դրանք ունեն բարդ, հիերարխիկ տեսք: Այդ կառուցվածքների ներքևի շերտերում տեղավորված են փորձնական ճանապարհով դիտարկելի, ստուգելի հետևանքները: Հիպոթեզից տեսությանն անցնելու, գիտելիքի այդ ձևը համոզչական դարձնելու կարևոր պայմաններից մեկը հիպոթեզից բխող հետևանքները փորձնական տվյալների հետ համադրելը, այդ ճանապարհով տեսական կոնստրուկտները փորձարկելը, ստուգելն է:

Տեսական և էմպիրիկ գիտելիքների հարաբերության²³, դրանց համադրման, տեսական գիտելիքների իմաստավորության, ճանաչողական նշանակության հարցերի պարզաբանումն սուսանձնապես մանրակրկիտ ձևով ուսումնասիրել են տրամաբանական պոզիտիվիզմի և ճեռպոզիտիվիզմի ներկայացուցիչները, որոնք ըստ էության շարունակել են Դ. Լոկկի և Դ. Հյուսմից եկող ավանդները: Պոզիտիվիզմի ձևավորման սկզբնական շրջանում նրա ներկայացուցիչները գտնում էին, որ յուրաքանչյուր տեսական հասկացություն, ըմբռնում, գիտելիքի ձև գիտական, իմաստավոր է այն դեպքում, եթե դա հանգեցնելի է դիտարկման պրեդիկատներին: Հետագա ուսումնասիրություններն ավելի մոտեցան գիտության ռեալ պրակտիկային, և տեսական կոնստրուկտների իմաստավորությունը սկսեցին բացատրել ոչ այնքան դիտարկման պրեդիկատների հետ դրանց ունեցած հարաբերության միջոցով, որքան հասկացությունների որոշակի համակարգի, համատեքստի մեջ: Անշուշտ, այդ հասկարգը կապված է էմպիրիկ գիտելիքի հետ, սակայն միմիայն որպես ամբողջ:

Դրա ոչ թե ամեն մի տարր է հարաբերում էմպիրիկ մակարդակի հետ, այլ միայն «առանձին կետերը», որոնք հանդես են գալիս որպես համակարգի ներկայացուցիչներ: Նշված փաստը նեոպոզիտիվիստական փիլիսոփայության ուղղության ներկայացուցիչներին հանգեցրեցին հիպոթետիկ դեդուկտիվ մոդելի գաղափարին, դրա միջոցով գիտելիքի վերլուծման, վերակառուցման անհրաժեշտությանը: Այդ համակարգի տարր են ինտերպրետատիվ (մեկնաբանվող) նախադասությունները, որոնք մասնակի տեսք են հանդիսանում օպերացիոնալ սահմանումները: Վերջիններս նշում են ակտուալորեն (կամ պոտենցիալորեն) իրականացող այն գործողությունների (օպերացիաների) հաջողականությունը, որոնց փաստական իրականացումը թույլ է տալիս քայլ առ քայլ բացահայտելու տեսական հասկացությունների իմաստը, ձևակերպելու այդ հասկացությունների կիրառման էմպիրիկ պայմանները: Նկատենք, որ մեկնաբանվող նախադասությունները միայն դիտարկման նախադասություններ չեն, այլ պարունակում են ինչպես դիտարկման պրեդիկատներ, այդպես էլ տեսական տերմիններ: Այսպիսով, հիպոթեզը գիտական, իմաստավոր է համարվում այն դեպքում, եթե դա հաստատվում է էմպիրիկ փաստերով, և եթե կարող են նշվել այնպիսի երևակայական փաստեր, որոնց ռեալ լինելու դեպքում կհերքեն դա (վերջին պայմանը առաջադրել է Կ. Պոպերը)²⁴: Ամեն մի գիտական կառույց պետք է ենթադրի իր հերքումը: Եթե նախապես հայտնի է, որ հիպոթեզից բխող հետևությունները սկզբունքորեն անհերքելի են, ապա դրանք հնարավոր չէ նաև հաստատել, հերքել: Ըէ որ այդ դեպքում ենթադրվում է, որ ինչպիսիք էլ լինեն ապագա փաստերը, դրանք համատեղելի կլինեն այդ հիպոթեզի հետ: Եթե հիպոթեզը սկզբունքորեն չի հերքվում ոչ մի, թեկուզ երևակայական փաստերով, ապա այդ հիպոթեզը կպատկանի ոչ թե գիտության, այլ կրոնի,

²³ Տե՛ս В. Швырев, Неопозитивизм и проблемы эмпирического обоснования науки. М., 1966; В. Швырев. Теоретическое и эмпирическое в научном познании: В. Смирнов. Уровни знания и этапы процесса познания. В сб.: «Проблемы логики научного познания». М., 1964; Г. Рузавин. Научная теория; Л. Баженов. Строение и функции естественнонаучной теории.

²⁴ Տե՛ս К. Поппер. Логика и рост научного знания. М., 1983, с. 245.

հեքիաթի, առասպելի բնագավառին: Այսպիսով, հերքման հնարավորության պայմանի առկայությունը հիպոթեզից պահանջվում է մինչև դրա փաստական հաստատումը, ստուգումը: Այդպիսին է, օրինակ, վիտալիզմի հիպոթեզը, որը չունի ստուգելի հետևություններ: Եթե փորձնական հաստատումը վերաբերվում է ոչ թե առանձին հիպոթեզի, այլ հիպոթեզների համախմբությանը, ապա այդ համակարգից բխած հետևանքների հաստատումը կվերաբերի ամբողջ համակարգին: Փորձնական ճանապարհով մի հիպոթեզի հաստատումը տրամաբանական օղակների միջոցով անուղակափորեն բերում է մյուս հիպոթեզների հաստատմանը: Այդ տեսակետից չի կարելի համաձայնել Կ. Պոպերի այն դրույթի հետ, որում նա գտնում էր, որ եթե հիպոթեզը չի համապատասխանում էմպիրիկ փաստերին, ապա անհրաժեշտ է ոչ թե նոր ենթադրություններ, հիպոթեզներ ներմուծել տվյալ փաստերի հետ համապատասխանությունն ապահովելու համար, այլ այն մերժել²⁵: Նկատենք, որ եթե փորձի հետ տեսության ամեն մի անհամապատասխանությունը հիմք ծառայեր նրա մերժման համար, ապա անհրաժեշտ կլիներ մերժել գոյություն ունեցող յուրաքանչյուր տեսություն:

Գիտության ռեալ պրակտիկայում փորձնական որոշ տվյալների հետ հիպոթեզի, տեսության անհամապատասխանությունը հանգեցնում է տվյալ իրավիճակի հետազոտմանը, գիտելիքի այդ ձևի հնարավորությունների քննական զննահատմանը, ելակետային պնդումների լրացուցիչ վերլուծմանը: Ծառ դեպքերում այդ իրավիճակը բերում է գիտական գիտելիքի տվյալ ձևի ձևափոխմանը, կոնկրետացմանը, լրացուցիչ ենթադրությունների ներմուծմանը և ոչ էականներից ազատվելուն: Դա հանգեցնում է հիպոթեզի, տեսության զարգացմանը, հարստացմանը և, իհարկե, բարդացմանը: Սակայն, գիտական գիտելիքի այդպիսի ծավալումն ունի որոշակի սահման, որից այն կողմ հիպոթեզի հետագա ձևափոխումը դառնում է անիմաստ: Վերջին հաշվով դա կարող է հանգեցնել գիտական գիտելիքի այդ ձևի մերժմանը և նոր հիպոթեզի, տեսության առաջադրմանը: Մերժման համար հիմք կարող է ծառայել գիտելիքի պարզության պահանջը: Եթե ունենք բոլոր պայմաններին հավասարապես քավարարող երկու հիպոթեզներ, ապա գիտական հասարակայնության կողմից նախընտրելի, համոզեցուցիչ ճանաչվում է կառուցվածքային տեսակետից առավել պարզը:

Դիտարկելի, էմպիրիկ, օպերացիոնալ փաստերի կողմից հիպոթեզների, տեսությունների հետևանքների հաստատումը, հիմնավորումը գիտելիքի այդ ձևը համընդհանրական և անհրաժեշտ դառնալու, գիտական հասարակության կողմից ընդունելություն գտնելու, ճանաչվելու, համոզեցուցիչ համարվելու կարևոր պայմաններից են:

Գիտական գիտելիքի տեսական հիմնավորվածությունն որպես համոզականության չափանիշ

Հիպոթեզը տեսության վերածվելու, հավաստի, ընդունելի, ճանաչելի դառնալու հաջորդ կարևոր պայմանը գիտության տվյալ բնագավառի կոնցեպտուալ ապարատը այլ տեսությունների, ինչպես նաև աշխարհի գիտական պատկերի հետ կապի, համաձայնության, համակարգայնության մեջ գտնվելն է: Մեր կարծիքով, այդ հարթը կարելի է ուսումնասիրել, քացառախյտել միջտեսական հարաբերությունների ըմբռնման²⁶ միջոցով:

Մեթոդաբանական գրականության մեջ միջտեսական հարաբերությունները հիմնականում ուսումնասիրվել են գիտական գիտելիքների հանգեցման (ռեդուկցիայի), ունիֆիկացիայի պրոբլեմների կապակցությամբ: Այստեղ միջտեսական հարաբերությունները մեզ հետաքրքրում են այլ տեսանկյունից: Ինչպես նկատեցինք վերևում, գիտական հիպոթեզը տեսության վերածվելիս այն պետք է տեսական հիմնավորվածություն ունենա: Ահա, քացառախյտելով արդեն ձևավորված, համակարգված, որոշակի բնագավառի, օրինակ՝ ֆիզիկայի դասընթացում պարփակված միջտեսական հարաբերությունները, մենք հնարավորություն ենք ստանում վեր հանելու այն տեսական պայմանները, որոնք անհրաժեշտ են հիպոթեզը տեսության վերածվելու, գիտական հասարակայնության կողմից այն հավաստի, ճշմարիտ, համոզիչ ճանաչվելու, զննհատվելու համար: Այդ պայմանները իրենց ամբողջականությամբ մենք կրճուրթագրենք որպես համոզության տեսական չափանիշ: Կանգ չառնելով տեսությունը համակարգող միջտեսական հարաբերությունների հիմնավորման ման-

²⁵ Տե՛ս Կ. Պոպեր. Логика и рост научного знания. С. 313—315.

²⁶ Տե՛ս Ի. Кузнецов. Взаимосвязь физических теорий.—«Вопросы философии», 1963, № 6; А. Ляпунов. К вопросу об интертеории математики.—«Вопросы философии», 1970, № 5; С. Крымский. Научное знание и принципы его трансформации. Киев, 1970; М. Булге. Философия физики. М., 1975; Г. Рузавин. Научная теория.

րամաների²⁷ վրա, մենք կտանձնացնենք հետևյալ հարաբերությունները՝ սահմանման, բխեցման, ինվարիանտության, ընդհանուր և մասնավոր տեսությունների փոխհարաբերության և կարգավորման: Կարգավորման հարաբերությունն արտահայտում է տեսության, տեսությունների համակարգի և աշխարհի գիտական պատկերի միջև գոյություն ունեցող էսպի առանձնահատկությունը: Վերջինս ներհյուսված, ընկղմված լինելով տվյալ ժամանակի սոցիալ-հոգեբանական, մշակութային, աշխարհայացքային համատեքստի մեջ, իրենից ներկայացնում է իդեալական, համանշանակ զգացողության հասնող ամբողջություն, որը կարգավորում, ուղղում, համակարգում, իմաստ, արժեք է տալիս այն պատկերացումներին, ըմբռնումներին, սկզբունքներին, ad hoc հիպոթեզներին, օրենքներին, տեսություններին, որոնք ներտեսական և միջտեսական հարաբերությունների, տրամաբանական բազմազան նևերի կողմից չեն հիմնավորվում, անհատական են, գոյություն ունեն ինքնին: Իհարկե, նշված իդեալական ամբողջի պատկերացումը միայն վերացարկման միջոցով կարելի է բաժանել տրամաբանական հիմնավորման բազմազան ձևերից: Դա աշխարհը տեսնելու, ըմբռնելու, գնահատելու մեր կարողությունն է, և իր առանձնահատկություններով աշխարհի ամբողջականությունը բնորոշ է համոզականության հասած ցանկացած «լսարանի» համար: Սակայն, դա չի նշանակում, որ այդ «լսարանները» և դրանցում ստաջացած իդեալական ամբողջությունները միանգամայն անկախ են՝ դրանք իրենց հիմքում ունեն տվյալ ժամանակի, դարաշրջանի սոցիալ-հոգեբանական, մշակութային համատեքստը:

Փիտակյան գիտելիքի բացատրման և կանխատեսման հնարավորությունները որպես համոզականության չափանիշ

Փիտակյան գիտելիքի կարևորագույն խնդիրը բնության և հասարակական երևույթների բացատրությունն ու դրանք զարգացման ընթացքի կանխատեսումն է²⁸:

Դրանք այն արտաստամաբանական չափանիշներից են, որոնց տեսակետից կարելի է գնահատել գիտելիքների հավաստիության, ճշմարտության, համոզականության աստիճանը: Ասվածում դժվար չէ համոզվել: Բավական է ուսումնասիրել գիտական գիտելիքի բացատրման և կանխատեսման ֆունկցիաները որպեսզի տեսնել, որ դրանց խորությունը և միանշանակությունը կախված է գիտելիքի հաստիության աստիճանից:

Մեթոդաբանական գրականության մեջ գիտական բացատրությունը բնութագրվում է որպես այնպիսի հետևեցում կամ դատողության գործընթաց, որի նախադրյալներն անհրաժեշտ ինֆորմացիա են պարունակում որոշակի փաստերի, հիպոթեզների կամ տեսությունների հիմնավորման համար: Ծատ դեպքերում հետևեցում անելով հասկանում են դեդուկցիան՝ նախադրյալներից փաստի, հիպոթեզի, օրենքի տրամաբանական բխեցումը: Այդ նախադրյալները նշանակվում են՝ էքսպլանանդ (բացատրող) անվանումով, իսկ եզրակացությունը, հետևանքը, արտածումը՝ էքսպլանանդ (այն, ինչ անհրաժեշտ է բացատրել) տերմինով: Իր ձևական կառուցվածքով բացատրությունն էքսպլանանդից էքսպլանանդումին կատարած տրամաբանական անցում է, սակայն ինչպես մեթոդաբանական նպատակադրվածությամբ, այդպես էլ ինքնաբանական դերով այն չի հանգում մտահանգմանը. ցանկացած բացատրություն հեռվում է տրամաբանական բխեցման վրա, սակայն ոչ ամեն մի բխեցում է բացատրություն:

Բացատրության դեպքում բացատրողը (ասենք՝ գիտնականը) ձգտում է գտնել այնպիսի նախադրյալներ, որոնցից կարելի է տրամաբանորեն բխեցնել բացատրվող փաստերը և ընդհանրացումները: Անշուշտ, այդպիսի նախադրյալները օժտված են ավելի մեծ տրամաբանական ուժով, քան եզրակացությունները, հետևությունները: Սովորաբար, որպես բացատրման նախադրյալներ հանդես են գալիս փաստերի բազմազանությունը միասնության բերող օրենքները, սկզբունքները, հիպոթեզները և, անշուշտ, տեսությունները: Ասվածից դժվար չէ նկատել, որ գիտական գիտելիքի մյուս ձևերի, այդ թվում հասուն հիպոթեզների համեմատությամբ, տեսություններն ունեն ավելի մեծ բացատրական ուժ: Այդ դեպքում որպես էքսպլանանդ հանդես են գալիս ոչ թե առանձին, այլ միմյանց հետ սերտորեն փոխկապված սկզբունքները, օրենքները, հիպոթեզները, այսինքն՝ տեսությունն ամբողջապես կամ դրա կոնցեպտուալ միջուկը: Առավել արժեքավոր են այն տեսությունները, որոնք բացատրում են էմպիրիկ փաստերը համակարգող և ընդհանրացնող օրենքները և հիպոթեզները, այսինքն՝ հետազոտվող երևույթների կառուցվածքները, դրանք ստաջացնող պատ-

²⁷ Տե՛ս A. Казарян. Межтеоретические отношения и системность науки. Ереван, 1978.

²⁸ Տե՛ս P. Карнап. Философские основания физики. М., 1971, с. 39—59; Е. Ниякитин. Объяснение-функция науки. М., 1979; Г. Рузавин. Научная теория, с. 215—237; И. Бажемов. Строение и функция естественной теории. С. 157—176.

ճառները և ներքին մեխանիզմները: Այդ տեսակետից տեսությունները բաժանվում են ֆե-
նոմենոլոգիական և ոչ ֆենոմենոլոգիական տեսությունների: Ֆենոմենոլոգիական անվանում
են ազն տեսությունները, որոնք նկարագրում են դիտարկելի երևույթների, փաստերի օրի-
նաչափ կապերը: Ոչ ֆենոմենոլոգիական տեսությունները բացահայտում, բացատրում են
հետազոտվող երևույթների ներքին կառուցվածքը, առաջացնող պատճառները և մեխա-
նիզմները:

Ինչպես նկատելի է, բացատրությունն ունի տրամաբանական հետևեցման տեսք, որի
էքսպլանանդումը նախապես հայտնի է, և խնդիրը հանգում է էքսպլանանս գտնելուն: Տրա-
մաբանական կառուցվածքի տեսանկյունից կանխատեսումը ևս ունի դեդուկտիվ բնույթ
ձև: Թեև իրենց տրամաբանական կառուցվածքով բացատրությունը և կանխատեսումը համ-
ընկնում են, սակայն իրենց նպատակներով դրանք սկզբունքորեն տարբերվում են միմ-
յանցից: Կանխատեսման դեպքում հետևանքը բխեցվում է մինչև նկարագրվող երևույթի
բացահայտումը. դա վերաբերվում է այն փաստին, երևույթին, որը դեռևս պետք է առա-
ջանա ապագայում: Սակայն, նույնիսկ այն դեպքում, երբ բխեցման նախադրյալները ըն-
դունվում են ճշմարիտ, ապա դրանից ստացված և ապագա դեպքերին վերաբերող կան-
խատեսումը չի կարող ճշմարիտ համարվել մինչև դրա էմպիրիկ ստուգումը. հետազոտու-
թյան արդյունքի ճշմարտությունը կարող է հաստատվել միայն ապագայում: Եթե առօրյա
նախադրությունն դեպքում կանխատեսումը հիմնվում է դեպքերի և փորձերի պարզ ինդուկ-
տիվ ընդհանրացումների կրկնողության վրա, ապա գիտական կանխատեսումը՝ ստուգված
ընդհանրացումների, օրենքների և տեսությունների: Կանխատեսման կարողությունը գի-
տական տեսության ստեղծագործական բնույթի, ինքնազարգացման լավագույն դրսևորումն
է: Դրանով գիտական տեսության զարգացումը ձեռք է բերում հարաբերական ինքնուրույ-
նություն և իր զարգացմամբ էապես առաջ է անցնում փորձից և դիտարկումից: Ավելին,
գիտական յուրաքանչյուր բնագավառ ունի ոչ միայն ստուգման, այլև իրենց կանխատեսում-
ների կատարելագործման, ճշգրտման առանձնահատուկ մեթոդները: Դա պայմանավորված
է նրանով, որ բացահայտվում են առավել խորը օրենքներ, տեսություններ, ընդլայնվում
են դրանց կիրառման բնագավառը և հավաստիության աստիճանը: Այսպիսով, տեսական
կանխատեսումներն ամենահուսալիներն են, որքանով դրանք հենվում են ոչ թե առանձին
օրենքների, այլ հիպոթեզների, օրենքների, սկզբունքների համակարգի վրա: Այն վերա-
բերում է ինչպես դիմամիկական, այդպես էլ սիուլաստիկական տեսություններին: Առաջին
տիպի տեսություններում կանխատեսումները որոշակի, ճշգրիտ են, բնութագրում են դի-
մամիկական ցանկացած համակարգի հավաստի, միանշանակ բնույթը: Դրանց թվին պատ-
կանում են երկրաչիճ և երկնային մեխանիկայի, դասական ֆիզիկայի և քիմիայի շատ տե-
սությունները: Այդ օրենքները բնութագրում են ոչ թե հետազոտվող դասի ամեն մի օրենքը,
այլ օրելիսների՝ որպես ամբողջի, որոշ հատկություններն ու հատկանիշները: Որքանով
վիճակագրական օրենքները չունեն ունիվերսալ բնույթ, այդ պատճառով դրանք վրա հիմնը-
ված կանխատեսումները հավանական բնույթի են. կանխատեսումները բնութագրում են
միայն տվյալ գործընթացի ուղղությունն ու միտումը: Իհարկե, դա չի նշանակում, թե երբ
անհրաժեշտ է հաշվի առնել մեծ թվով գործոնների փոխազդեցությունները, տեսությունները
պետք է համարել հետազոտության ժամանակավոր, օգնական միջոցներ: Դա առանձնա-
պես բնորոշ է կենսաբանական, հոգեբանական, հումանիտար բնագավառներին, ինչպես
նաև քվանտային ֆիզիկայի, քիմիայի տեսություններին: Ասվածից հետևում է, որ բացատ-
րության և կանխատեսման խորությունն ու միանշանակությունը վկայում են գիտելիքի տրվ-
յալ ձևի լրիվության, դրանում տեղ գտած օրինաչափությունների ինֆորմատիվության,
հուսալիության, համոզականության մասին:

Թեև մենք բացահայտեցինք տվյալ ժամանակի «գիտնականների լսարանում»՝ «գիտ-
նականների միաբանությունում», գիտական գիտելիքի համընդհանրականությունն ու ան-
հրաժեշտությունը, դրա համոզականությունն ապահովող չափանիշները, այդուամենայնիվ
դրանք ունեն համընդհանրական բնույթ, քանի որ արտահայտում են իդեալական «հա-
մապարփակ լսարանը», իսկ վերջինս, ինչպես ասել ենք, ընկած է որակականորեն բազ-
մազան, հարաբերական ինքնուրույն «լսարանների» հիմքում:

А. С. КАЗАРЯН. Критерия уведительности научного знания.— В статье обсу-
ждаются основные понятия теории аргументации, взаимоотношения мнения и убе-
ждения-критерия действительности.

Впервые в литературе в качестве критерия убедительности научного знания
выдвигаются и рассматриваются: логически правильное построение, простота, эм-
пирическая обоснованность, теоретическая обоснованность и функции объяснения
и предвидения знания вместе взятые.